ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2023 թվականի N 2312 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 530-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Երևան քաղաքի Արզումանյան փողոցի 10 և 17 շենքերի և հարակից տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու, ներդրումային ծրագրին հավանություն տալու և համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերն ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 530-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետում «2024 թվականի հունվարի 1» բառերը փոխարինել «2024 թվականի փետրվարի 29» բառերով.

2) որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետում «մեկամսյա» բառը փոխարինել «տասնամսյա» բառով.

3) որոշման N 4 հավելվածի 6-րդ կետում «սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում» բառերը փոխարինել «սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնամսյա ժամկետում» բառերով.

4) որոշման N 4 հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետում «սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում» բառերը փոխարինել «սույն որոշման 6-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ներդրումային ծրագիրն իրակա-նացնելու վերաբերյալ պայմանագիրը կնքելուց հետո մեկ ամսվա ընթացքում» բառերով.

5) որոշման N 4 հավելվածի 6-րդ կետը 5-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին ենթակետով.

«5.1) Սույն կետի 5-րդ ենթակետում նշված բնակարանները «ՄԼ Մայնինգ» ՍՊ ընկերության կողմից կարող են տրամադրվել նաև առանց վերանորոգման, եթե առկա է վթարային շենքի բնակարանի նախկին սեփականատիրոջ դիմումը՝ նոր կառուցվող շենքում բնակարանն իրեն առանց վերանորոգման տրամադրելու մասին.».

6) որոշման N 4 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետում «130.000-ական» բառերը փոխարինել «160.000-ական» բառերով, «160.000-ական» բառերը՝ «180.000-ական» բառերով, իսկ «200.000-ական» բառերը՝ «220.000-ական» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ